

ԼԻԼԻԹ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՄԵՐ ՕՐԵՐԻ «ԵՐԳ ԵՐԳՈՅԸ»

Պ.Սևակի «Երգ երգոց» պոեմը գրված է աստվածաշնչյան նշանավոր սիրերգության՝ Սողոմոնի նույնանուն երգաշարի ներշնչանքով, և ոչ մի պայմանով չի կարելի այն շփոթել գրական ոճավորման կամ նմանակման հետ: Հանրահայտ «Երգ երգոցի» և Պ.Սևակի ստեղծագործության առնչակցությունը պետք է դիտել ամենից առաջ հենց ներշնչանքի կամ ոգեկոչումի գործոնով: Սողոմոնի սիրո ասքը գերել է Սևակին պարկերների շռայլությամբ և լռության նյութականությամբ, մեղաֆորների ու փոխաբերությունների զանազանությամբ և գունային նրբաթելերով: Արեւմտյան ու ոգեղեն է աստվածաշնչյան «Երգ երգոցը», և Սևակը, փարված դրա հմայքով, անդիմադրելի ներքին մղումով անձնական սիրո պոռթկումները խփացրել է իր երգում՝ պահպանելով սակայն իր ոճի ինքնատիպությունը, հարազատ մնալով իր ըմբռնումներին ու գրելաձևին: Անգամ այն փողերում, որ քաղված են անմիջականորեն Սողոմոնի «Երգ երգոց»-ից, Սևակը երևում է իր ձայնով և նոր բովանդակություն է փալիս դրանց:

«Երգ երգոցը» մի անմար խարույկ է՝ հրդեհված սիրո այրող բուցերով, և ինչպես Սևակն է գրել՝ «լաքացողներից ավելի խարույկ բորբոքողն ինքը գիտե իր գինը»:

Ո՛ւմ որ կրակ պիտենա, գա փանի սրտես վառելու,

Ո՛ւմ թե որ քիչ պիտենա, շար փանի զանձիկն էրելու»:¹

Բանաստեղծի սերն անկեղծ է, խոր ու առիքնող, նա մեծ սիրահար է՝ ամբողջովին համակված վարար զգայմունքով:

Ես քեզ սիրում եմ քո նախապապի՝

Սողոմոնի պես,

1. Պ.Սևակ, Երկերի ժող., Ե., 1974թ., հ. 5, էջ 33:

Մինչդեռ ես...

Գիտե՛ս,

Ես ինչ-որ չափով նույնպես արքա եմ:

Ոչ նրա համար, որ ունեցել եմ

Հարձեր ու կանաչք.

Ոչ էլ նրանով որ ես կարող եմ

Երգ երգոյ թողնել:

Եթե ինձ համար թագուհի ես դու,

Ի՞նչ եմ ես հապա,

Ինչպե՛ս ինձ կոչել, եթե ոչ արքա,-

Այլ կերպ չի լինում.

Թագուհիները ե՛րբ են պատկանել մանկալավիկներին...¹

Կարծում ենք՝ իրավացի չէ գրականագետ Ս.Սողոմոնյանը Պ.Սևակի այս ստեղծագործության վերաբերյալ իր գնահատության մեջ. «Երգ երգոյ» քնարական պոեմը համարելով «մաքուր, իդեալական սիրո մի իսկական հիմն», նա գրում է, թե Սևակը «բանաստեղծացնում է անգո աղջկան, անգո սերը: Հերոսուհին ավերարանական «երգ երգոյի» հերոսուհին է, ավերարանական հին ժամանակներում ապրած ու երգված մի աղջիկ, որին Պ.Սևակի պոեմի հերոսը սիրում է... մտքի մեջ, մտովին»²:

«Երգ երգոյ»-ի գրության ժամանակը բանաստեղծը նշել է 1957թ. դեկտեմբեր, 1960թ. մայիս, տեղը՝ Մոսկվա: Սևակի կենսագրությունը և ստեղծագործությունների պատմությունը ներկայացնելիս Ա.Արիստակեսյանը հայտնում է, որ պոեմի առաջին երեք գլուխները 1957-ի դեկտեմբերին են գրվել, մյուս երկուսը՝ 1960-ի մայիսին³: Գրեթե նույն շրջանում Սևակը ձեռնամուխ էր եղել նաև «Նույն հասցեով» շարքի ստեղծմանը: 1958-ին սկսած շարքն ավարտին հասցրել է 1963-ին, այդ ընթացքում գրելով սիրերգության երրորդ պոեմը՝ «Նահանջ երգով»-ը: Եվ շատ բնական է, որ նշված շարքը թեմատիկայով և տրամադրությունների նմանատիպ զարգացումով որոշակի եզրեր է պահպանում «Երգ երգոյի» հետ: Ըստ երևույթին բանաստեղծն այս շրջանում է «իրեն տեր արել բովանդակ

1. Մեքբերումները պոեմից արված են Պ.Սևակի երկերի ժող.-ի 3-րդ հատորից:

2. Ս.Սողոմոնյան, «Ժամանակակից հայ բանաստեղծներ», Ե., 1967թ., հ. 2, էջ 494:

3. Ա.Արիստակեսյան, «Պ.Սևակ», Ե., 1974թ., էջ 297-298:

աշխարհին»՝ հանդիպել Սուլամիթային և սիրո երջանկության պահը վայելել: Թե «Երգ երգոյ» պոեմում, թե «Նույն հասցեով» շարքում քնարական նույն հերոսն է՝ հոգեբանական ապրումների, ներքին փոփոխությունների շղթայում սիրած էակի հմայքին ու կախարդանքին գերի: Եվ իրավամբ նարեկապիական վարպետությամբ է Սևակը փրկապետում մարդակալին-հոգեբանական ապրումների դրամատիկ անցումներին:

«Նույն հասցեով» շարքն էլ պոեմի սկզբունքով է ստեղծված և, ինչպես այս պոեմում շարժման ընթացքը պայմանավորել է հեղինակի սուր հարցումները, դիմում-խնդրանքները, սիրած էակին ուղղված օրհնանքները, փառաբանումները, նաև սակավ նախափինքները: Այս գործերում առանցքը՝ միակ գործող անձը հերոսն է՝ ինքը՝ բանաստեղծը, և նրա միջոցով են անձնավորվում հերոսուհիները՝ Սուլամիթան՝ պոեմում, անանուն աղջիկը՝ շարքում (որը թերևս նույն Սուլամիթան է), և նրանց շնորհիվ է, որ քնարական հերոսի «մարմինը լույս են ուզում խմորել», և նաև նրանց պարճառով է, որ նույն հերոսը «կորցրել է ունեցածը՝ հպարտությունը հաղթողի»: Եվ զգացումների սուր հակադրության այս դիմամիկան ավելի է շեշտադրում սիրո մոգական ուժը, իսկ բանաստեղծը, ինչպես պոեմում այնպես էլ «Նույն հասցեով» շարքում, սիրո և սիրած էակի օրհներգուն է՝ ներկա թե բացակա, մոտիկ թե հեռու:

«Երգ երգոյ» քնարական պոեմը,- գրել է Ա.Արիստակեսյանը,- իրական սիրո գեղեցկության ու մաքրության գովերգումն է, իրական սիրույ ծնունդ առած հոգեկան ու զգայական ապրումների բանաստեղծական ներդաշնակ արտահայտություն: Պոեմի հինգ գլուխներից յուրաքանչյուրն ունի իր վերացական-ընդհանրական թեման՝ հանդիպում հիպպուս, չըմբռնված վայելքի տառաաանք, վայելք, կառույ, որոնք բանաստեղծը պարկերել է առարկայապակա շոշափելիությամբ, զգացմունքների ու ապրումների անընդմեջ շարժումներով ու փոփոխումներով»¹:

Ամեն գլխի համար Սևակը բնաբան է ընտրել «Երգ երգեց»-ից որևէ ասույթ, փորձելով փայլ հարվածի շարժման ուղղությունը համադրել աստվածաշնչյան բնաբանի իմաստին: «Խնդրեցի զնա՝ և ոչ գրի, Կոչեցի զնա՝ և ոչ եր ինձ զձայն... Իւղ թափեալ է անուն քո...»- առաջին գլխի

1. Նույն տեղում, էջ 299:

բանաբանն է, և մուտքում բանաստեղծը իր անակնկալ սիրո հայտնությունն է անում:

Գարունն այս անգամ ձմռանը եկավ,

Այն էլ հյուսիսում.

Ես բոլորվին չէի սպասում,

Զմեռն այս վկա:

Քեզ չփնտրեցի, չորոնեցի

Եվ... գրա հանկարծ,

Ինչպես դու մի օր անունդ ես գրել.

Օ Սուլամիթա:

Սևակը անակնկալների պոետ է, չի սիրում առեղծվածային բարդությունների դիմել, անորոշ դիպվածներ հյուսել, սակայն շարունակ մտքի, գեղարվեստական հնարքների, փան ու փողի անսովոր ձևեր է մատուցում:

Աստվածաշնչյան «Երգ երգոյ»-ը կազմված է ութ գլխից, որոնք փոքրիկ հիպպական գովեստներ են, սիրո խոստովանություններ, փառաբանումներ «կանանց գեղեցկագույնի»՝ Սուլամիթայի անձին ու հմայքին: Բոլոր գլուխները ունեն իրենց ծանուցումները. Ա. «Սիրողի և սիրեալի երգը», Բ. «Սիրեալի փափագը դեպի իր սիրողը», Գ. «Սիրեալի հաւատարմութիւնը: Սիրողի փառաւորութիւնը»¹ և այլն: Այստեղ շարային համարակալությունով են դասդասված գովեստներն ու փառաբանությունները: Պ.Սևակը նույնպես իր պոետի գլուխները բաժանել է թվագրված հարվածների՝ առաջինը՝ 6, երկրորդը և երրորդը՝ 12-ական, չորրորդը՝ 10 և հինգերորդը՝ 14: Հարվածների փողաքանակի և բանաստեղծական չափի հարցում նա ազատ է եղել և ծավալվել այնքան, որքան ասելիքը պահանջել է: Ոչ միայն կառուցվածքային արտաքին հարկանիշները կամ Սողոմոն թագավոր, Սուլամիթ, Իսրայել, Երուսաղեմ և ուրիշ անուններ և այլ հիշատակումներ են ընդգծում աստվածաշնչյան սիրո գլուխգործոցի ազդեցությունը Սևակի վրա, այլև նրա ոգին, սիրո երագի ու ռեալության միահյուսման կենսանքը:

Սողոմոնի «Երգ երգոյ»-ի առաջին գլխում սիրողը և սիրեցյալը մեկը մյուսին ընդմիջելով, գովեստներ են շոայլում իրար («քո սերը գինիից

1. Մեքեբեումները «Աստվածաշնչից»՝ 1989թ., Սյունիում, էջ 781-786:

լաւ է», «թափուած իւր է քո անունը», «հինաւոյի ողկույզ է իմ սիրեկանը ինձ համար» և այլն): Սևակի պոեմում միայն քնարական հերոսն է հղում իր զգացմունքները, դրախտը փեսնում սիրեցյալի «թարթիչների հովանու ներքո», նրա «դեռ փակ ծոցում»:

Օ Սուլամիթա, բաց արա դուռըդ:

Ես քեզ չեմ փնտրել, քեզ չեմ որոնել,

Չեմ էլ հարցրել ես պահակներից

Քո

Իմ չունեցած-չիմացած հասցեն:

Ես ճամփորդի պես,

Ո՛ր մոլորվածի,

Հասել եմ դուռըդ,

Որ և բախում է իմ ձեռքը դրսից,

Քո սիրտը ներսից:

Ընդունիր հյուրիդ:

Որ կդառնա փեր,

Բայց նաև՝ ծառա...

Ապա նա այլաբանորեն հայտնում է իսկությունը փախադարձ սիրո՝ «Մենք կարծեն արդեն խնձորը կերանք, Քանզի նա ով որ միքով է փրվում, փրվում է, անշուշտ, մարմնից առավել»:

Սևակն իր պոեմի երկրորդ գլխին բնաբան է ընտրել «Գեղեցիկ ես իբրև գերուսաղէմ...» միտքը: Նա չի բացառիկացնում հերոսուհու արտաքինը.

Գեղեցիկ ես դու, ինչպես բոլորը,

Որոնց սիրում են,

Եվ ոչ ավելի և ոչ էլ պակաս:

Սողոմոնի մոտ փրված հարցին, թե «Ի՞նչ անելի է քո սիրեկանը ուրիշ սիրեկանից, որ մեզ այդպես երդում ես փախիս», հետևում է պատասխանը՝ «Իմ սիրեկանը սափափակ ու կարմիր է, բիւրերից գերազանց է» և նրա գովքն անելույց հետո ասում է. «Նորա քիմքը քաղցրեղեններ է, եւ նա ինքը բոլորովին ցանկալիք է. եւ ահա իմ ընկերը, ով Երուսաղէմի աղջկերք»: Սակայն, որ իր սպեղծագործություններում հակում չունի արտաքին դիմանկարի նկարագրության, Սողոմոնի «Երգ երգոյ»-ի փապկորության փակ՝ բազմազան համեմատություններով (սև՝ ինչպես իր

ժողովուրդի դարավոր բախտը. պարանոցը՝ մարմարե վեհ աշտարակ,
կոնքերը՝ քնար լարված և այլն) կերպում է մի սևաչա աղջկա թովիչ ու
լուսավոր կերպար: Սողոմոնի երգում սիրածի գեղեցկությունը կամ
բարեմասնությունները համեմատվում է ծառ ու ծաղկի, մրգերի ու անգին
քարերի, աղավնիների ու եղնիկների հետ: Սևակի պոեմում դարձյալ
հանդիպում ենք այդպիսի համեմատությունների.

Ասացեք որ նա մի փակ այգի է,

Այգու մեջտեղում՝ դռնփակ հնձան,

Բուրող հնձանում՝ եռացող գինի...

«...Սևակը հյուսում է սիրո հավերժության լեգենդը: Բանաստեղծը
կարծես սրեղծում է սիրո մի նոր բիրլիական, նույնքան իմաստուն,
փիլիսոփայական, նույնքան գեղեցիկ ու հեթանոսական: Նորից վերհուշերի
երանությամբ է հառնում այդ լեգենդը, զգացմունքի թրթռներն այրող
կարոտ են դարձել, և նրա պատրանքի մեջ վերապրում են վայրկյանների
երջանիկ հավերժությունը» (հ.1, էջ XՊ).- Ս.Սարիյանի այս գնահատությունը
հիմնված է պոեմի գաղափարական-փիլիսոփայական, նաև գեղարվեստա-
կան-հուզական առանձնահատկությունների վրա:

«Մութեք ինձ ի րուն գինւյ... Վասնզի խանդակաթ եմ սիրով...»
սա պոեմի երրորդ գլխի բնաբանն է, որին և համահունչ է գլխի մուտքը.

Երուսաղեմում երբևէ չեղած աղջիկներ խարությաշ,

Դուստրեր հյուսիսի.

Ինձ էլ սնուցեք կազդուրիչ գինով,

Քանի որ սիրույ ես նվաղում եմ:

Առաջին հաղվածն է ամբողջությամբ այս քառապողը, որին
հաջորդող հաղվածը բացում է քնարական հերոսի ներաշխարհը լույս
պահին.

Ես նվաղում եմ, իսկ կրծքիս ներքո

Կախված է նաև ծանրաքար մի բեռ՝

Սեփական սիրտըս:

Աստվածաշնչյան «Երգ երգոյ»-ում դիմումներն առ Երուսաղեմի
աղջիկները շարունակական են և որոշակի տրամադրություն են սրեղծում
միջավայրի ու ժամանակի, սիրո ընթերցումների ու մարդկային
հոգեբանության վերաբերյալ: Պ.Սևակի պոեմի երրորդ գլուխն
ամբողջությամբ ընդարձակ դիմում է «Երուսաղեմում երբևէ չեղած խարությաշ

աղջիկներին»՝ հյուսիսի դուստրերին՝ նրանց միջոցով Սուլամիթի հետ
հաղորդակցումը անմիջական դարձնելու համար: Գլխի 12 հավաժներում
էլ հնչում է այդ դիմումը՝ Սուլամիթին որոնելու ու գտնելու տենչով:

Նա կա և չկա՝ ինչպես երկինքը,

Իմն է - իմը չէ՝ ինչպես որ ինքը...

Սողոմոնի «Երգ երգոյ»-ի 9 գլուխն սկսվում է սիրածի որոնման
տաճարով: «Իմ անկողնի մեջ գիշերը ես որոնեցի իմ հոգիի սիրածին, ես
որոնեցի նորան, բայց չ'գտայ:

Վեր կենամ, շուռ գամ քաղաքումը, փողոցներումն ու
հրապարակներումը որոնեմ իմ հոգիի սիրածին, նորան որոնեցի, բայց
չ'գտայ»:

Որոնման տաճարներին անմիջապես հետևում է գտնումի
հրճվանքը. «Հագիւ թե անց էի կացել նորանից, որ գտայ իմ հոգիի
սիրածին. նորան բռնեցի եւ բաց չ'թողեցի...

Երդում եմ տալիս ձեզ, ով Երուսաղեմի աղջկունք, այծեամներովը
կամ դաշտի ղենիկներովը. մի զարթնեցնեք եւ վեր մի կացնեք սիրականին,
մինչեւ որ ինքը բարեհաճէ»:

Ողջ գիշերն ի լույս իմ մահճակալին

Փնտրում եմ նրան, չեմ գտնում սակայն:

Ողջ ցերեկն ի բուն իմ նեղ սենյակում

Կանչում եմ նրան, և ձայն չի տալիս:

Եվ դուրս եմ գալիս,

Որ փողոցներում որոնեմ նրան:

Աստվածաշնչյան «Երգ երգոյ»-ում կարդում ենք. «Երդում եմ տալիս
ձեզ, ով Երուսաղեմի աղջկերք, եթե գտնեք իմ սիրականին, ի՞նչ եք ասելու
նորան. ասացեք թե Սիրով հիւանդ եմ ես»: Պ.Սևակը օգտագործում է
«Երդվեցնում եմ ձեզ...» ձևը և հետևում է իր մախորդին:

Երուսաղեմում երբևէ չեղած խարտյաշ աղջիկներ.

Թե պարահաբար հանդիպեք նրան՝

Երուսաղեմի թխահեր դստեր.

Ի՞նչ պիտի ասեք:

Երդվեցնում եմ ձեզ. ասացեք նրան,

Որ ես հիվանդ եմ կարեվեր սիրով:

«Նույն հասցեով» շարքի «Գլխապետույթ» բանաստեղծության մեջ (գրված 1962-ի հունվարի 26-ին) Պ.Սեակը տենչում է կարողանալ «մի ճախրանքով աստվածաշնչան... միմիայն մեկին մտովին ասել

Ղու իմ վերջինը՝ թյուրիմացաբար,

եվ իմ միակը՝ ճակատագրով...»

Իսկ դրանից առաջ նա «Երգ երգույ» պոեմում հյուսիսի դուստրերի միջոցով հայրենել է Սուլամիթին, որ սերն իր «հին է ու վաղնջական, հին ու նոր» ինչպես առավորն ինքը» և նան՝

Երդվեցնում եմ ձեզ, ասացեք նրան,

Ուգում եմ լինի նա սերն իմ վերջին,

Իսկ ես էլ՝ նրա առաջին սերը:

Պոեմի չորրորդ գլխիը Սեակն սկսում է իր սիրո կանչի արձագանքով՝ «Եվ դու չուշացար, Ղու շփապեցիր»: Ջարմանալի պարկերավոր ու արբեցնող է բանաստեղծի սիրո հանդիպումը, հոգում հեղված ու դուրս թափվող զգացմունքների, նան անհագ ցանկության, հիպսումի ու պաշտամունքի անդրադարձումներով:

Եկար փարվեցիր՝

Քո ամբողջությամբ:

Մամուռն է այդպես քարերին փարվում:

Եվ արշալուսի գույները՝ երկնին:

Բանաստեղծական պարկեր-համեմատությունների շղթան շարունակվում է՝ մեկը մյուսից բնորոշ ու գեղեցիկ, և քնարական հերոսը՝ հուզական ապրումների ու զգացումների բարձրակետում արձակում է իր գոյության, իր կյանքի իմաստի վճիռը.

Եվ դու բացվեցիր...

Այդպես բացվում է մահճում երեսան,

Սթնում՝ ծաղիկը

Ու ես այդ պահին՝

Քո անմեղության բույրերից արբշիռ՝

Սոռապա իմ ողջ անցյալը հարուստ

Ու երջանկապա իմ... աղքատությամբ:

Ու փրվեցիր դու

Ծնվելով նորից:

Այդպես փրվում է հողն արմատներին,

իր հունին՝ ջուրը:

Ո՛ր ես հասկացա, որ ես ոչ մի տեղ

Այնքան չեմ զգում իմ գոյությունը,

Որքան քո գրկում:

Եվ թվում է, թե Սևակի սերը անկառավարելի է հախուռն ու անհատակ, հզոր մի զգացմունք է դա իրավիճակի փրոջ իրավունքով, որին ամբողջովին փրվելը դառնում է բնական ու հասկանալի: «Երբ Պարույր Սևակը գրում է «Սեր», նա հորինում է ժամանակակից «Երգ երգո ց»-ը, ուր միախլում են հայ քնարերգության վաղնջական, ասպետական խանդավառությունը և մեր օրերի բարոյական մաքրությունն ու այրումը» (Վ. Միկուշնիչ)¹:

Սևակի այն խոստովանությունը, թե պոեզիայում իր համար հիմնականը մարդկային ներաշխարհի, հոգու բարդ շերտերի թափանցումն է, մնում է առաջնային նաև պոեմներում: «Երգ երգո ց» պոեմի հուզական ներգործության գաղղնիքը հոգեբանական խտացումներն են, սիրո բազմաշերտ ապրումների հայրնագործումը: Պոեմում սերը նոր ծնունդ է, նոր շնչառություն, վերերկրային արբեցում: Այս արբեցման բանաստեղծական պարկերում Սևակը վերակենդանացնում է Սողոմոնի երգից քաղած չորրորդ գլխի բնաբանը. «Ահեակ նորա ընդ գլխով իմով, և աջ նորա պարեսցե գինև...»:

Քո գլխի տակ եր իմ ձեռքը դրված,

Եվ քո մեջքն էի պարել իմ աջով.

Չկար ժամանակ,

Չկար նաև միտք.

Կար շնչառություն,

Որ շատ էր նման

Օվկիանոսների փուրհառության...

Սուլամիթային ուղղված կանչերը՝ համառոտված ու երկար անվանումներով, բնության ու փիեզերքի հետ զուգահեռ-համեմատություններով կենդանի պարկերները, հոգեկան ապրումների վերարծարծումները միփում են, ինչպես ինքը՝ Սևակն էր ասում՝ «հոգու երկրաբանության» հետախուզման: «Երգ երգո ց» պոեմի մասին

1. Գրական թերթ, 1974թ., 8 փետրվարի:

Դ.Գասպարյանը գրել է. «Դա սիրո պանծապումն է, գեղեցկության գովքը. հոգու ու մարմնի տոնը: Դա սերն է, որ իր մոխրապող կրակի մեջ է առնում մարդուն, լափիզում նրան բոլոր կողմերից և դարձնում հովի թևին դողդողապող կապույտ լույս»¹:

«Նույն հասցեով» շարքում կա մի բանաստեղծություն՝ «Կորյրեցի և գրա» վերնագրով: Սևակի սիրապատումներին առհասարակ հարմար կգա նաև «Գրա և կորյրեցի» ընդհանրական վերնագիրը: Բազմաթիվ բանաստեղծություններում («Նորից չեն սիրում...» շարքում նույնպես), նաև «Ո՛րշապած իմ սեր» պոեմում առաջին վերնագրի տրամադրությունն է իշխում, իսկ ուրիշ շատ գործերում ե «Նահանջ երգով» պոեմի մեջ երկրորդի գաղափարն է գերակայում: «Երգ երգույն» էլ գրա և կորյրեցի տխուր ավարտն ունի:

Պոեմի հինգերորդ՝ վերջին գլուխը, սիրո կարուպի անջալման էլեգիան է, կարուպի կսկիծը և սիրո հավերժության փառաբանումը: «Ես ննջեմ, եւ սիրտ իմ արթուն կայ...» Սողոմոնի տողը բնաբան դարձնելով՝ Սևակը շարունակում է.

Ինձ արդեն վաղուց այնպես է թվում,
Թե ես ննջում եմ, իսկ սիրտս արթուն է,
Եվ փնտրում եմ քեզ,
Սակայն չեմ գտնում,
Ո՛ր կանչում եմ քեզ,
Բայց ձայն չես տալիս...

Նոր սիրո «վրանգավոր քարոզը» ոչինչ չի կարող փոխել, քնած է հերոսի սիրտը, նա գիտի որ հեռավորությունը ահավոր է, որ չի գտնի «որքան էլ փնտրի» և անտարբեր է կյանքի եռուզեռին, նախանձում է անցնող-սիրահար զույգերին.

Ձեռքիս ափերը հալվել են ուզում:
Ո՛ր է կրակը.
Քո ձեռքը չկա:
Մաքսնեք ուզում են լույս ու շող հունցել,
Ո՛ր են ուսերդ,

1. Դ.Գասպարյան, «Պոեզիան և կյանքի ճշմարտությունը», Ե., 1990թ., էջ 229:

Եվ լանջող ու՞ր է:

Եվ ամենուրեք ծաղիկ են ծախում,

Սիրած ծաղիկըդ:

Ես ու՞մ նվիրեմ:

Կարոտի կրակը և հոգու այրումը բանաստեղծը հասցնում է այնպիսի լարման, որ արդեն գրած գեղարվեստական պարկերներն ասես անգոր են դառնում արտահայտելու ներքին դրաման, և նա դիմում է «անսովոր» համեմատությունների («Ո՛ր ես պարված եմ մեր անցած օրվա հուշերով այնպես, ինչպես Պոմպեյը սառած լավայով», կամ «Այդ քո սրվերից ու լուսից՝ արդեն Շերպավոր եմ ես, ինչպես հովազը»): Մարդը բնության մի մասն է, նրա անբաժանելի մասնիկը և շար հաճախ նրա հոգեվիճակը ու փրամադրությունը բնության ինչ-ինչ ելևեղումների արձագանք են, նաև հար ու նման այդ երևույթներին: Սևակի պոեմում սիրո բուռն զգացմունքը ալիքվում է հոգում, ապա դուրս ժայթում՝ հրձկանքի, կարոտի կամ փառապանքի տեսքով, ձուլվում բնությանը, համեմատվում նրա բազմերանգ արտահայտությունների հետ ու դառնում դիպուկ, հզոր ու բնական: Զնարական հերոսը փառապում է հուշերի ու կարոտի ցավից. «Բայց մի՞թե սրտին բան կհասկացնես»- հառաչանքով ասում է պոետը, և որքան էլ իրական է սիրած էակի հեռանալը՝ ամենուրեք փնտրում է նրան, «սանրող հայացքով իր շուրջն է նայում», գիտի, որ չի գտնի, սակայն ուրիշ կերպ անկարող է պարկերացնել հեքազա կյանքը.

Առանց քեզ ապրելն այնքան է հիմա

Անհասկանալի ու փաթորինակ,

Որքան սառույցի կամ ձյունի վրա

Վառվող խարույկը:

Ո՛ր ես ապրում եմ՝

Այսպես վառվելով:

Բայց և կա հավատը («Սակայն ես գիտեմ, Որ դու անմահ ես, ինչպես անմահ է կրակն աշխարհում, Այստեղ կհանգչի, Կվառվի այլուր»): Սա հավատն է սիրո կախարդական ուժի հանդեպ, և սրելով ծագործության ավարտը հնչում է որպես սիրո օրհներգ, հավաքարմության ու նվիրումի անբեկանելի ղողանք.

Եվ ուզում եմ ես փորձըս մոռանալ

Սհավոր փորձը իմ ամբողջ կյանքի,

Եվ ի հակառակ՝ անկասկած ասել.

Որ կմոռանա շունը փիրոջը.

Ծառն իր ծաղկելը.

Ցուլն իր բառաչը.

Եվ ժամապահն իր նշանաբանը.

Սակայն ոչ ես՝ քեզ.

Իմ Սուլ...

Սուլամի...

Իմ Սուլամիթա:

Իսկ մեկ փարի հեկո (Նույն հասցեով՝ շարքից) բանաստեղծը գրում է.

Տեսնես թե աշխարհում կա՞ գեթ մի կենտ լեզու,

Որ չունենա իր մեջ այս «անջափում» բայը:

Թե կա՞ ես փոխում եմ ազգությունըս...

Այո, արվեստն ունի իր օրենքները՝ հաճախ չգրված, որոնցից մեկը այն հրաշք-հայտնությունն է, որ գլխապաշտոն է առաջացնում մտքի լարումից, հույզի շիկացումից, բառ-պատկերների ուժից: Պարույր Սևակի «Երգ երգոյ» պոեմը այդպիսի հրաշք-հայտնություն է: